# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Վ3-ԳՀԱՊՁԲ-2021/8

ք. Վանաձոր «___» ______ 20 թ.

<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ-ը ի դեմս տնօրեն Ա. Թադևոսյանի, որը գործում է <<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Վիոլա» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա. Մեժլումյանի, որը գործում է «Վիոլա» ՍՊԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ախտորոշիչ և քիմիական նյութերը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

**լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և/ կամ արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը: Պայմանագիրը կատարել սույն պայմանագրիհավելված N 1.1 ով հաստատված աշխատակիցներին հայաստանյան ծագում ունեցող ապրանքների մատակարարման միջոցով :

2.4.12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 233844 (երկու հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր քառասունչորս)ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև ՀՀդրամը, Գնորդըփոխանցումէ Վաճառողի բանկայինհաշվին՝ որպեականխավճար: Կանխավճարիմարումնիրականացվումէհանձնման-ընդունման արձանագրություններիհիմանվրակատարվողվճարումներիցնվազեցումներ (պահումներ) կատարելուձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողինվճարումներ չեն կատարվում:[19]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

3. 4 Սույն պայմանագրի 2. 4. 11 և 2. 4. 12 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթեներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապաՀՀ կառավարության 01. 04. 2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով վաճառողին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկըներկայացվելէառանցԱԱՀ-ի, ապապայմանագիրըկնքելիս «ներառյալԱԱՀ-ն» բառերըհանվումեն:*

[19] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիքպայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով:Եթեպայմանագրովչինախատեսվումկանխավճարիհատկացում, ապասույնկետըհանվումէնախագծից:*

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀօրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում էպայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

---

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 48 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Պ.Սևակի 49
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220055140267000
ՀՎՀՀ 06907229

------------------------------ Ա. Թադևոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք, Գյուրջյան փ. 17$_2$. 91
տարածք
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
տնօրեն

------------------------------ Ա. Մեժլումյան
/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[25] Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով:Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

*Հավելված N 1*
*«    »    2021 թ. կնքված*
*«ՎՅ-ԳՀԱՊՁԲ-2021/8» ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| նախատեսված չափաբաժնի համարը հրավերով | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափի միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | մատակարարման ենթակա քանակը | մատակարարման ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 33141179 | ԱՄԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ | PZ Cormay S.A. | ԱՄԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ ASAT՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 120թեստ(հատ): 1թեստի համար աշխատանքային ռեակտիվի ծավալը 1մլ է: ԱՄԱՏ-ի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | հատ | 52 | 6240 | 120 | Պ. Սևակի 49 | 120 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 33141179 | ԱԼԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ | PZ Cormay S.A | ԱԼԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ ALAT՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 120թեստ(հատ) : 1թեստի համար աշխատանքային ռեակտիվի ծավալը 1մլ է: ԱԼԱՏ-ի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | հատ | 52 | 6240 | 120 | Պ. Սևակի 49 | 120 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |
| 3 | 33211110 | Մեզի անալիզատոր ի թեստ | Urit Medical Electronic Co. Ltd/DFI Co. Ltd | Ախտորոշող թեստ -ձողիկներ՝ 11 պարամետրի որոշելու համար: Մեթոդը քրոմատոգրաֆիկ: Ֆորմատը 100 թեստ (հատ) : Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | հատ | 56,4 | 11280 | 200 | Պ. Սևակի 49 | 200 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |
| 4 | 33211120 | Գլյուկոզայի որոշման համար նախատեսված թեստ | Lab-Care Diagnostics Ltd/Bio Lab Diagnostics Ltd | Գլյուկոզայի որոշման համար նախատեսված թեստ GLUCOSE՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 500թեստ(հատ) է : Գլյուկոզայի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | հատ | 12 | 34560 | 2880 | Պ. Սևակի 49 | 2880 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |
| 5 | 33211130 | Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ | PZ Cormay S.A. | Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ CHOL՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 240թեստ(հատ): 1թեստի համար աշխատանքային ռեակտիվի | հատ | 24,686 | 17280 | 700 | Պ. Սևակի 49 | 700 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ծավալը 1մլ է: Խոլեսթերինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | | | | | | | բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |
| 6 | 33211130 | HDL Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ | PZ Cormay S.A. | HDL խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ HDL՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 120թեստ(հատ): Խոլեսթերինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար | հատ | 338 | 40560 | 120 | Պ. Սևակի 49 | 120 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | | | | | | | |
| 7 | 33211150 | Միզանյութի որոշման համար նախատեսված թեստ | Bio Lab Diagnostics Ltd | Միզանյութի որոշման համար նախատեսված թեստ UREA՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը կոլորիմետրիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածուում թեստերի քանակը 200թեստ(հատ) : Միզանյութի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | հատ | 35,2 | 10560 | 300 | Դ. Սևակի 49 | 300 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |
| 8 | 33211160 | Կրեատինինի որոշման համար նախատեսված թեստ | PZ Cormay S.A. | Կրեատինինի որոշման համար նախատեսված թեստ CREATININE՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը Ֆոտոմետրիկ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածուում թեստերի քանակը 240թեստ(հատ) է: Կրեատինինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման | հատ | 32,5 | 3900 | 120 | Դ. Սևակի 49 | 120 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | | | | | | | մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |
| 12 | 33211230 | ՄՌԴ որոշման համար նախատեսված թեստ | Bio Lab Diagnostics Ltd | ՄՌԴ որոշման համար նախատեսված թեստ RPR՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը ագլյուտինացիոն եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Մեկ հավաքածույում թեստերի քանակը 100թեստ(հատ): ՄՌԴ որոշման համար նախատեսված հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | հատ | 81,6 | 24480 | 300 | Դ. Սևակի 49 | 300 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |
| 13 | 33211240 | RF որոշման համար նախատեսված | Bio Lab Diagnostics Ltd | RF որոշման համար նախատեսված թեստ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը | հատ | 61,2 | 6120 | 100 | Դ. Սևակի 49 | 100 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | թեստ | | ագլյուտինացիոն եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 100թեստ(հատ) : RF հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | | | | | | | պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |
| 14 | 33211250 | C-ռեակտիվ սպիտակուցի որոշման համար նախատեսված թեստ | Bio Lab Diagnostics Ltd | C-ռեակտիվ սպիտակուցի որոշման համար նախատեսված թեստ) CRP՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը ագլյուտինացիոն եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Մեկ հավաքածույում թեստերի 100թեստ(հատ): C-ռեակտիվ սպիտակուցի որոշման համար նախատեսված հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի | հատ | 81,6 | 16320 | 200 | Պ. Սևակի 49 | 200 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | սերտիֆիկատներ՝ ISO13485 | | | | | | | |
| 15 | 33211300 | Կալցիումի որոշման համար նախատեսված թեստ | PZ Cormay S.A. | Կալցիումի որոշման համար նախատեսված թեստ՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը Ֆոտոմետրիկ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 240թեստ(հատ) : 1թեստի համար աշխատանքային ռեակտիվի ծավալը 1մլ է : Կալցիումի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | հատ | 32 | 11520 | 360 | Պ. Սևակի 49 | 360 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |
| 16 | 33211310 | Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված թեստ | МБООИ «Общество больных гемофилий» | Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված թեստ՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը ֆիբրինգոյացման ժամանակի որոշման եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը ոչ պակաս քան 100թեստ(հատ) և ոչ ավել քան 200թեստ(հատ): Թրոմբոպլաստինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | հատ | 46,08 | 13824 | 300 | Պ. Սևակի 49 | 300 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | 33211430 | Ալֆա Ամիլազա | PZ Cormay S.A. | Ալֆա Ամիլազայի որոշման համար նախատեսված թեստ՝ AMILASE: Նախատեսված է բաց համակարգի համար, մեթոդը՝ կինետիկ որոշման եղանակ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 120 թեստ: Ամիլազի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը(օրինակ՝ կալիբրատոր կամ այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերա-ծրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | հատ | 258 | 30960 | 120 | Դ. Մնակի 49 | 120 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը |

| Չ/Հ | Անվանումը ապրանքային նշանը | Միավորի գինը | Մատակարարման ենթակա քանակները ըստ ամիսների | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մարտ | | ապրիլ | | մայիս | | հունիս | | հուլիս | | օգոստոս | | սեպտեմբեր | | հոկտեմբեր | | նոյեմբեր | | դեկտեմբեր | | Ընդամենը | |
| | | | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար |
| 1 | ԱՄԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ | 52 | | | | | | | | | | | | | 120 | 6240 | | | | | | | 120 | 6240 |
| 2 | ԱԼԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ | 52 | | | | | | | | | | | | | 120 | 6240 | | | | | | | 120 | 6240 |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Մեզի անալիզատորի թեստ | 56,4 | | | | | | | | | | | | | 100 | 5640 | 100 | 5640 | | | | | 200 | 11280 |
| 4 | Գլյուկոզայի որոշման համար նախատեսված թեստ | 12 | | | | | | | | | | | | | 1000 | 12000 | 1000 | 12000 | 880 | 10560 | | | 2880 | 34560 |
| 5 | Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ | 24,686 | | | | | | | | | | | | | 240 | 5925 | 240 | 5925 | 220 | 5430 | | | 700 | 17280 |
| 6 | HDL Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ | 338 | | | | | | | | | | | | | 120 | 40560 | | | | | | | 120 | 40560 |
| 7 | Միզանյութի որոշման համար նախատեսված թեստ | 35,2 | | | | | | | | | | | | | 200 | 7040 | 100 | 3520 | | | | | 300 | 10560 |
| 8 | Կրեատինինի որոշման համար նախատեսված թեստ | 32,5 | | | | | | | | | | | | | 120 | 3900 | | | | | | | 120 | 3900 |
| 12 | ՄՌՊ որոշման համար նախատեսված թեստ | 81,6 | | | | | | | | | | | | | 100 | 8160 | 100 | 8160 | 100 | 8160 | | | 300 | 24480 |
| 13 | RF որոշման համար նախատեսված թեստ | 61,2 | | | | | | | | | | | | | 100 | 6120 | | | | | | | 100 | 6120 |
| 14 | C-ռեակտիվ սպիտակուցի որոշման համար նախատեսված թեստ | 81,6 | | | | | | | | | | | | | 100 | 8160 | 100 | 8160 | | | | | 200 | 16320 |
| 15 | Կալցիումի որոշման համար նախատեսված թեստ | 32 | | | | | | | | | | | | | 240 | 7680 | 120 | 3840 | | | | | 360 | 11520 |
| 16 | Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված թեստ | 46,08 | | | | | | | | | | | | | 100 | 4608 | 100 | 4608 | 100 | 4608 | | | 300 | 13824 |
| 17 | Ալֆա Ամիլազա | 258 | | | | | | | | | | | | | 120 | 30960 | | | | | | | 120 | 30960 |

*Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:*
*Անտառինից և քիմիական նյութերի նշված քանակները պահանջվող առավելագույն քանակներն են*

- Ապրանքի մատակարարումը մինչև պահեստ և բեռնաթափումն իրականացնում է Մատակարարը
- Մատակարարումը պետք է իրականացվի ժամանակին, պատշաճ
- Ապրանքները պետք է լինեն չօգտագործված

**ԳՆՈՐԴ**
<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Պ.Սևակի 49
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220055140267000
ՀՎՀՀ 06907229

------------------------- Ա. Թադևոսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք, Գյուրջյան փ. 17շ. 91 տարածք
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
տնօրեն

------------------------- Ս. Մեժլումյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ՎՅ-ԳՀԱՊՁԲ-2021/8 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանում | վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների այդ թվում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33141179 | ԱՍԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 2080 | 4160 | 6240 | 6240 |
| 2 | 33141179 | ԱԼԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 2080 | 4160 | 6240 | 6240 |
| 3 | 33211110 | Մեզի անալիզատորի թեստ | | | | | | | | 3760 | 7520 | 11280 | 11280 |
| 4 | 33211120 | Գլյուկոզայի որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 11520 | 23040 | 34560 | 34560 |
| 5 | 33211130 | Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 5760 | 11520 | 17280 | 17280 |
| 6 | 33211130 | HDL Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 13520 | 27040 | 40560 | 40560 |
| 7 | 33211150 | Միզանյութի որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 3520 | 7040 | 10560 | 10560 |
| 8 | 33211160 | Կրեատինինի որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 1300 | 2600 | 3900 | 3900 |
| 12 | 33211230 | ՄՌՊ որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 8160 | 16320 | 24480 | 24480 |
| 13 | 33211240 | RF որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 2040 | 4080 | 6120 | 6120 |
| 14 | 33211250 | C-ռեակտիվ սպիտակուցի որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 5440 | 10880 | 16320 | 16320 |
| 15 | 33211300 | Կալցիումի որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 3840 | 7680 | 11520 | 11520 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | 33211310 | Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված թեստ | | | | | | | | 4608 | 9216 | 13824 | 13824 |
| 17 | 33211430 | Ալֆա Ամիլազա | | | | | | | | 10320 | 20640 | 30960 | 30960 |

**ԳՆՈՐԴ**

<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Պ.Սևակի 49
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220055140267000
ՀՎՀՀ 06907229

------------------------------ Ա. Թադևոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք, Գյուրջյան փ. 17շ. 91 տարածք
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
տնօրեն

------------------------------ Ս. Մեժլումյան
/ստորագրություն/
Կ.Տ